ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 332

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքը (Ծաղկաշեն բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Գավառ համայնքի (Ծաղկաշեն բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքը (Ծաղկաշեն բնակավայրի) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի (Ծաղկաշեն բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
05-046-0112-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0.48691 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք և 05-046-0131-0141 կադաստրային ծածկագրով 0.20822 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք	05-046-0112-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0.48691 հա մակերեսով և 05-046-0131-0141 կադաստրային ծածկագրով 0.20822 հա մակերեսով էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ կոմունալ ենթակառուցվածքների հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ առողջապահության և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների գրություններով նշված պահանջները (կցվում է):

4. Գավառ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ծաղկաշեն բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի (Ծաղկաշեն բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «15» «օգոստոսի» 2024 թ.